ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՔՍ համայնքն ունի զբոսաշրջային մեծ պոտենցիալ: Համայնքում առկա են զբոսաշրջության տեսակներից՝ մշակութային և գյուղական տուրիզմ:

Առատաշենի գինու գործարան

Արաքս համայնք այցելելիս առաջին հերթին կարող եք այցելել և տեսնել Առատաշենի գինու գործարանը, որը հիմնադրվել է Արաքս համայնքի Առատաշեն գյուղում: Այն գինեգործության գոհար է, որն արտացոլում է տարածաշրջանի հարուստ պատմությունն ու մշակույթը:
Այս գինեգործարանը, որը գտնվում է Առատաշեն բնակավայրի Կոմիտասա 1/3 հասցեում, հայտնի է իր բացառիկ գինեգործական ավանդույթով:

Այստեղ դուք կարող եք խաղողի այգիներով շրջապատված հյուրատան շքապատշգամբից վայելել նախընտրելի գինին՝ վայելելով բնության կողմից տրված հրաշալի տեսարանը:

Այս ամենին գումարվում են հեծանվային տուրերը, հայկական ազգային խոհանոցի ուտեստները, գինիների համտեսն ու վարպետության դասերը:

Aratashen Winery մասին ավելի մանրամասն կարող եք տեսնել այստեղ:



Գայի Սուրբ Նշան սոցիալական մշակութային կենտրոն

Սուրբ Նշան եկեղեցին գտնվում է Գայ բնակավայրի կենտրոնական հատվածում:
Հավատացյալներն ամեն կիրակի հնարավորություն ունեն մասնակցելու սուրբ և անմահ պատարագին:

Սուրբ Նշան սոցիալական մշակութային կենտրոնը հնարավորություն է տալիս նաև երեխաներին սովորել՝ կավագործություն, ասեղնագործություն, նկարչություն, եկեղեցական «Նշան» երգչախմբում երգել:

Նկարչության խմբակի երեխաները մշտապես մասնակցում են մրցույթների և պարբերաբար վերադառնում են հաղթնակներով:

Գայի Սուրբ Նշան սոցիալական մշակութային կենտրոնի հետ կարող եք կատարել ուխտագնացություններ դեպի ՀՀ տեսարժան վայրեր, Արևմտյան Հայաստան՝ Անի, Կարս, Բայազետ, Բերկրիի ջրվեժ, Վան, Միերի դուռ, Աղթամար կղզի, Վանա կատուների բուծարան, Բիթլիս, Մուշ, Սուլուխի կամուրջ, Էրզրում, Հովվի կամուրջ: